



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



10633

658

7-39







51  
p. 1038



150

2002



ԱՌԱՋՆՈՐԴ  
ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ

ՏԱՐԵՐՔ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՍԻՄՕՆ ԶԷՕՄԼԷՔՃԵԱՆ

Թղթակից-Ուսանող Բարիզի Առեւտրական

գործնական վարժարանին

(Ecole Pratique de commerce de Paris)

Ծ Ր Ա Գ Ի Ր

Պատմութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր գիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սպարանական եւ պանրայի հաշիւներ եւայլն.

Հասնր Բ. — Տեսր Ա.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ.ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901



## Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ք


ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

## Օրէնսգիտութեան

Ծագում առեւտրական օրէնքներու. — Առեւտրական օրինաց հիմնական սկզբունքները գծուած են գլխաւորապէս խտլացի իրաւաբաններու կողմէ, Միջին Դարու մէջ: Յայտնի է թէ այդ թուականին ո՛րքան զարգայած ու ծաղկած էին Իտալիոյ ծովեզերեայ քաղաքները: Վաճառականութիւնը կը վարէին օրէնքի ոյժ ունեցող սովորութիւններ, որք առեւտրական պայմանագրութիւններու և գործառնութիւններու վերաբերեալ կանոնները կը ճշտէին, կը սահմանէին: Այդ թուականին ի գիր առնուած ամէնէն կարեւոր հաւաքածոները ծովային վաճառականութեան կը վերաբերին: Յիշենք մասնաւորապէս « Consulat de la mer » ը որ Միջերկրականի եզերաց վրայ ի գործ դրուող սովորութիւնները կը պատմէ և « Rôles d'Oléron » ը, որ հաւաքածոյ մ'է Ովկէանոսի նաւարկութեան մէջ կիրարկուած սովորութիւններուն: Այս երկու հաւաքածոներ, ամէնէն հաւանական ենթադրութիւններու նայելով, ժ.Պ. դարուն կը վերագրուին: Առեւտրական զանազան հրապարակներու յատուկ այս ընդհանուր և մասնաւոր սովորութիւններէն անկախաբար, Յրանսայի մէջ հրատարակուած կարգ մը հրամանագրեր և հրովարտականք ինչ ինչ կանոններ դրին: Բայց բոլոր այս տրամադրութիւնք անկատար էին և չէին կրնար բաւել այն պէտքերուն զոր կը ծնուցանէր առեւտրական



գործառնութեանց բարգաւաճումը: Առեւտրական օրէնքներու ամբողջութիւնը պարունակող օրէնսդրական առաջին յիշատակարանը հիմնուեցաւ Լուի Ժ. Ի ատեն: Գօլպէս մեծ զարկ տուած էր վաճառականութեան: Իր ճարտար եւ իմաստուն վարչութեան տակ բազմաթիւ առեւտրական հաստատութիւններ և տարազագործարաններ հիմնուեցան և ծովային ու նաւային ձեռնարկութիւնք մեծ մղում առին: Աւելի՛ կատարեալ, աւելի՛ ամբողջական օրէնսդրութեան մը պէտքն հետզհետէ զգալի կ'ըլլար յոյժ: Ընդհանուր վաճառականութեան վրայ առաջին հրամանագիրն 1673ին հրատարակուեցաւ, գրէթէ ամբողջութեամբ խմբագրուելով Սաւարիի կողմէ, որ նախկին վաճառական մ'էր և գործնական կեանքի մէջ երկարատեւ փորձառութեամբ ուսումնասիրած էր առեւտրական իրաւաբանութիւնը: Սավարիի անունն այնքան սերտիւ կապուած է 1673ի հրամանագրին հետ, որ շատ անգամ « Սավարիի Օրինագիրք » անունը կը տրուի անոր: 1673ի հրամանագրին յաջորդեց 1681ինը, որ օրէնքներ դրաւ ծովային վաճառականութեան վրայ: Այս հրամանագիր, որ այն ատենի օրէնսդրական գլուխ-գործոցը նկատուած է, միայն Ֆրանսայի մէջ չէ որ սքանչացում պատճառեց: Դրացի ազգերն ալ հաւնեցան անոր և գրէթէ ամբողջ Եւրոպա ընդունեց զայն: Դար մը ետքը, այս հրամանագրերու վերաքննութեան հարկ տեսնուեցաւ և այս նպատակաւ յանձնաժողով մը կազմուեցաւ 1801ին: Օրէնսդիր ժողովը 1806ին ընդունեց պատրաստուած օրինագիրքը, որուն գործադրութեան թուական որոշուեցաւ 1808 Յունվար 1: Այս օրինագիրք կարեւոր յիշատակարան մ'է, զոր ընդունեցին ամէն լուսաւորեալ և վաճառական ազգեր: Ֆրանսա այսպէս պատիւ ունեցաւ Եւրոպական օրէնսդրութեանց հայթայթելու իրենց առեւտրական օրէնքներու էական տարրերը:



Ա. Մ Ա Ս


ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻԻՆ

Սահման եւ բաժանում. — Առեւտրական Օրինագիրքը կը պարունակէ առեւտրական գործառնութեանց վերաբերեալ ամէն կանոններ, ինչպէս նաեւ այդ գործառնութիւններէն ծագում առած վէճերը դատելու եղանակը:

Այս առաջին մասը պիտի բաժնենք հինգ գլուխներու, որոնց առաջինը պիտի խօսի վաճառականութեան վրայ ընդհանրապէս և վաճառականներու, վաճառականական գործերու և առեւտրական ընկերութեանց վրայ մասնաւորապէս: Երկրորդը պիտի խօսի առեւտրական պայանագրութիւններու վրայ, երրորդը՝ առեւտրական թուղթերու վրայ, չորրորդը՝ սնանկութեանց վրայ և հինգերորդը՝ առեւտրական դատարաններու վրայ: Վերջին գլուխով մը ծանօթութիւններ պիտի տրուին Առեւտրական սենեակներու և Առեւտրական ու ձարտարարուեստական Բարձրագոյն Խորհուրդներու վրայ:

Ա. Գ Լ Ա. Ի Թ

Ընդհանուր ծանօթութիւններ. — Առեւտրական Օրէնսդրութիւնը լաւ ուսումնասիրելու համար պէտք է ամէնէն առաջ գիտնալ թէ ի՞նչ տեսակ գործեր և ո՛ր դասակարգի մարդիկ ենթարկուած են անոր: Այս գլխին առաջին երկու հատուածները պիտի խօսին վաճառականական գործերու և վաճառականներու վրայ: Յաջորդ երեք հատուածներուն մէջ համառօտ և ամփոփ ծանօթութիւններ պիտի տրուին վաճառականութեան ազատութեան սկզբունքին, վաճառականութիւն ընելու համար պահանջուած յատկութիւններուն և վաճառականներու վրայ դրուած պարտականութիւններուն վրայ: Վերջին հատուածը պիտի նուիրուի առեւտրական ընկերութեանց:






Վանառականական գործեր


Վանառականութեան նպատակը. — Վանառականութիւնը կը կայանայ զանազան գործառնութիւններու մէջ, որոնց նպատակն է բնական և ճարտարական արտադրութիւններու փոխանակութիւնը կատարել և դիւրացնել, շահ մը հանելու դիտաւորութեամբ: Առուտուրի առարկաներն են ուտեստեղէնք և վաճառք: Ուտեստեղէն ըսելով կը հասկցուին այն բերքերը որք մարդուն կամ անասուններուն սպառումին յատկացած են, ինչպէս գինի, գարի, ևն: Վաճառք ըսելով կը հասկցուին անշարժ ստացուածքներէ, տուներէ և հողերէ զատ այն ամէն բաներ որք կրնան ծախուիլ կամ վարձու տրուիլ: Վանառականութիւն կը կոչուի նաեւ բնական բերքերու կամ մարդկային աշխատութեամբ առաջ եկած արտադրութիւններու փոխանակումը: Վանառականութեան այս կարեւոր ճիւղը, որ այլապէս խօսելով, բնական արտադրութիւններն աշխատութեամբ այլափոխելու մէջ կը կայանայ, նարսարուեստ կը կոչուի, և զայն ի գործ դնողները օարագագործ կամ գործարանատէր կ'ըսուին:

Վանառականութեան տեսակներ. — Վանառականութիւնը քանի մը տեսակի կը բաժնուի, մեծաքանակ եւ փոքրաքանակ, ներքին և արտաքին: Մեծաքանակ վաճառականն իր ապրանքները կը գնէ արտադրութեան կեդրոններէն կամ ուր որ ամէնէն ածան կը ծախուի, և փոխադրելով հոն ուր աւելի արժէք ունին, կը ծախէ մեծ քանակութեամբ: Փոքրաքանակ վաճառականն իր ապրանքները կը գնէ մեծաքանակ վաճառականէն կամ մինչեւ իսկ արտադրողէն, և խանութի մը մէջ հաւաքելով սպառողներուն կը ծախէ ուղուած քանակութեամբ: Ներքին վաճառականութիւն կը կոչուի ան որ նպատակ ունի, զոր օրինակ, Թուրքիոյ մէջ ծախել թրքական ապրանքները: Արտաքին վաճառականութիւն է օտար ապրանքները Թուրքիա բերել ու ծախել կամ Թուրքիոյ ապրանքներն օտար երկիր շրջել ու ծախել: Այս գործողութեանց առաջինը կը կոչուի ներածում, իսկ երկրորդը՝ արտածում:



Տ Ո Մ Ա Ր Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վանառատան մը տեսրակները պիտի բռնենք (Օրհաշիւ և Մայր հաշիւ), իւրաքանչիւր յօդուածին վրայ պէտք եղած բացատրութիւնները տալով: Իսկ Օժանդակ տեսրակներուն ձեւերը միայն ցոյց պիտի տանք, որով ամէն ընթերցող պիտի կրնայ իր օժանդակ տեսրակներն ինք բռնել:



Վանառատուն Գրիգորեան եղբայրք

Տեարք Յակոբ և Յովհաննէս Գրիգորեան եղբայրք հաւաքական (ֆոլեքիֆ) ընկերութիւն մը կազմած են 100,000 շրշ. դրամագլխով, կէս առ կէս վճարելի:

Առեւտրի առարկան. — Մետաքս և մետաքսեղէն: Գնում, վաճառում, ի հաշիւ վաճառում, եւլն:

Կազմութիւնը դրամագլխի. — Պայմանագրի մը համեմատ, որ պաշտօնապէս վաւերացուած է, մէն մի ընկեր պիտի դնէ 50,000 շրշ: Բայց ընկերութիւնն անմիջապէս պէտք չունենալով իր դրամագլխին, իւրաքանչիւր ընկեր իր դնելիք դրամագլուխին կէսը միայն պիտի վճարէ: Մնացեալը պայմանագրին մէջ նշանակուած թուականին պիտի վճարուի:

Բաժնեվնարի հաշիւ. — Մէն մի ընկերի համար այս անունով մասնաւոր հաշիւ մը պիտի բանանք և հոն պիտի արձանագրենք անոնց դրածը: Ընկերութիւնը բարոյական անձ մը կը կազմէ, երկու ընկերներէն անկախ: Մէն մի ընկեր, ըստ պայմանագրի, յանձն առած է 50,000 շրշ. դնել: Հետեւապէս նոյն գումարը կը պարտի ընկերութեան որ կը ներկայանայ Գրամագլուխ անունով: Ուրեմն, երկու ընկերները, իրենց մասնաւոր հաշիւին մէջ, պարտական պիտի ընենք, և դրամագլուխը՝ պահանջող (Տեսէ՛ք Օրհաշիւ Յօդ. 1):







Գնման սեփական (Յօդ. 3) . — Տիար Յակոբ Գրիգորեան  
20 ծրար կերպասեղէն բերաւ, զոր օրուան գինով հաշուելէ  
ետքը կ'անցընենք Գնման Տետրին մէջ որուն ահա մէկ նը-  
մոյշը . —

Տ Ե Տ Ր Գ Ն Մ Ա Ն

Օր. 3	1	Հոկտ. 1901			
		Տ. Յ. Գրիգորեանի բաժնելի. հաւուոյն			
	20	Ծրար կերպաս. 1160 մ. 4,50 էն Չեղջ	5220		
			835	50	
			4384	50	
		Չեղջ 2 %	87	50	
		Արժէք 1 Հոկտ. 901	4297		4297
	2	Նոյն			

Տեսք Անտուկի. (Յօդ. 4) . — Տիար Յակոբ Գրիգորեան  
բերաւ .

Փոխանակագիր	13580, 50
Ապրանք	4297
	<hr/>
	17877, 50
Դրամ	7122, 50
	<hr/>
	25,000

Դրամը պիտի անցնի Մնտուկին տետրակը, որ երկու  
մասի բաժնուած է: Չախ կողմը կ'անցնին մուտքերն, իսկ  
աջ կողմը՝ վճարումները: Ահա մէկ նմոյշը . —

Ս Ն Տ Ո Ւ Կ

Օր. 4	1	Հոկտ. 1901			
		Տ. Յ. Գրիգորեանի բաժնելի. հաւուոյն			
		Դրամ դրամը			7122 50

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ը Ն Դ Ա Ր Չ Ա Կ

Ա. ՇԽԱՐ ՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Ը Ն Դ Շ Ա Ն ՈՒ Ի Մ Ա Ն Օ Ր ՈՒ Թ Ի Ն Ն Ե Ր

Օսմ. Կայսրութիւնը կը բաղկանայ երեք մասերէ, Ա-  
սիական, Եւրոպական և Ափրիկեան, որք ունին հետեւեալ  
տարածութիւններն ու բնակիչները .

Կայսերական նահանգներ	Տարած. (քա. ըլմ.)	Բնակիչ
Ասիական Թուրքիա	1, 956, 698	22, 730, 000
Եւրոպական »	167, 000	5, 175, 000
Ափրիկեան »	1, 033, 350	4, 460, 000
	<hr/>	<hr/>
	3, 157, 048	29, 365, 000
Առանձնաշնորհեալ երկիրներ		
Պուլկարիա	96, 660	3, 340, 000
Պոսնա	58, 460	1, 489, 000
Եգիպտոս	994, 300	6, 848, 000
	<hr/>	<hr/>
	4, 306, 468	41, 012, 000

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՕՍՄ. ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

	Ներածուծիւն	Արտածուծիւն
Կայս. Նահանգք	21,360,000	15,430,000
Պուլկարիա	2,015,000	2,350,000
Եգիպտոս	15,525,000	17,432,000
	<hr/>	<hr/>
Օսմ. Ոսկի	38,900,000	35,212,000



### Վիճակագրութիւն ըստ վերջին բուսնամարտի

Օսմ. կայսրութեան մէջ գտնուած անշարժ ստացուածքներն են. — 21,111,000 կտոր հող մշակելի և մշակել. 1,063,350 պարտէզ. 2,223,500 այգի. 10,200 ագարակ. 576,814 անտառ. 1,095,050 շտեմարան. 4,206,000 տուն. 111,200 խան ( բնակութեան համար ). 9,050 մեծ խան. 568,000 խանութ. 30,500 փուռ. 2,100 բաղանիք. 36,500 մզկիթ. 4,250 գրատուն և մէտրէսէ. 3,450 թէքքէ. 12,600 եկեղեցի. 220 հիւանդանոց. 28,000 դպրոց. 71,600 աղբիւր. 52,200 ջրացք. 1,600 գործարան. 80 տպարան. 1100 ձմերանոց (բրժա). 1100 պահականոց. 670 նաւարան (ֆայրֆլանկ). 530 ձկնարան :

### Վարչային դրութիւն Օսմանեան կայսրութեան և կազմակերպութիւն ֆաղաֆային դասարանաց

Օսմ. երկիրները, գաւառային Օրինագրքին համաձայն, 1867էն ի վեր, իրենց կարեւորութեան համեմատ, բաժնուած են շրջանակներու որք կը կոչուին Վիլայեթ (նահանգ) :

Վիլայեթները կը բաղկանան յիվաներէ կամ սաննագներէ (գաւառ), սաննագները՝ ֆազաներէ (գաւառակ) և ֆազաները՝ ցահիյեներէ (գիւղատեղ) և ֆահիյեներէ (գիւղ) :

Օսմ. կայսրութեան մէջ կան. — 32 վիլայեթ, 94 սաննագ կամ միւքեսարքթուլիւն, 560 ֆազա կամ ֆալմամուլիւն, 1,282 ցահիյե կամ միւսիւրուլիւն, և 60,317 գիւղ :

Վիլայեթներն ունին ընդհանուր կառավարիչ մը, որ կը կոչուի Վալի (կուսակալ) և կ'ընտրուի Վեհ. Սուլթանէն : Ձինուորական ու զատական գործերէն զատ, քաղաքային ու քաղաքական, ելմտական ու ոստիկանական ամէն գործ-

ծերու հսկողութիւնն ու զատարաններու վճռագրոց գործադրութիւնն յանձնուած են կուսակալին, որուն իշխանութեան տակ կը գտնուին գաւառի վարչական ճիւղերու պետերը : Կարեւոր վիլայեթներն ունին մուավիին մը (կուսակալի օգնական) որ ի բացակայութեան վալիին, կը փոխանորդէ անոր : Մուավին չունեցող նահանգներու կուսակալի փոխանորդութիւնն առժամեայ կերպով կը կատարէ Տեֆթեսարը :

Տեֆթեսարը նահանգին ելմտական գործերուն կը հսկէ և ուղղակի կ'ընտրուի ելմտական նախարարութեանէն : Թէեւ կուսակալին իշխանութեան տակ է, բայց հաշուական գործերու մէջ ուղղակի մալիէին պատասխանատու է :

Նահանգի մը գրաւոր ամէն գործողութիւնները, պաշտօնական գրութեանց խմբագրութիւնը, կարեւոր թղթոց պահպանումը յանձնուած են ընդհանուր գրագրի մը որ մեքթուպնի կ'ըսուի : Ասոնցմէ զատ, ամէն նահանգի մէջ կան հանրային կրթութեան, առեւտրական, երկրագործական, հանրային շինութեան, կալուածահամարի, անտառաց, հանքաց և ոստիկանութեան պաշտօնէութիւններ, որք կեդրոնական կառավարութեան ձեռնհաս ճիւղերէն կ'ընտրուին և կը շրկուին :

Ամէն նահանգ ունի Վարչական ժողով մը (իտարէ մէճլիսի), որ կուսակալին նախագահութեան տակ կը գտնուի և կը բաղկանայ հաքիմէն կամ նախպէն, միւֆթիէն, տէֆթէրտարէն, մէքթուպնիէն, ոչ-խալամ ժողովրդոց կրօնական պետերէն և երկու իսլամ ու երկու ոչ-իսլամ անդամէ :

Վիլայեթները բաժնուած են սաննախներու, որք ունին կառավարիչ մը (միւքեսարքթ) : Կառավարիչը կ'ընտրուի Վեհ. Սուլթանէն և ներքին գործերու համար ենթակայ է վալիին իշխանութեան : Սաննախներու վարչային ձեւը վիլայեթներու նման է : Ելմտական գործերուն համար կայ Մալիէէն ընտրուած պաշտօնեայ մը որ մուսապեհնի կը կոչուի և պատասխանատու է վիլայեթի տէֆթէրտարին : Իսկ պաշտօնական գրոց խմբագրութիւնն ու պահպանումը յանձնուած են պաշտօնէի մը, որ քահրիքս միւսիւրի կը կոչուի : Ամէն սաննագ ունի իր վարչային ժողովը միւքեսարքթին նա-



խազահութեան տակ, և կը բաղկանայ հաքիմէն, միւֆթի-  
էն, մուհասէպէճիէն, թահրիրաթ միւտիրիէն, ոչ-խալամ  
ժողովրդոց կրօնական պետերէն և երկու իսլամ ու երկու ոչ-  
խալամ անդամներէ :

Սաննախները բաժնուած են քաղաքներու որք ունին փոխ-  
կառավարիչ մը (պայմագամ) : Սա կ'ընտրուի Վեհ. Սուլթա-  
նէն և ներքին գործերու համար ենթակայ է միւթէսարը-  
ֆին իշխանութեան : Գայմագամին պարտքն է ելմտական  
գործերը վարել և սուրքերը գանձելով սաննախները շրջել :

Քաղաքին վերաբերեալ պաշտօնական թուղթերու խմբ-  
բազրութեան համար ի հարկին մէկ կամ աւելի քաղաքեա-  
քիպիներ կը գտնուին գայմագամին տրամադրութեան տակ :  
Քաղաքներու մէջ ալ կան վարչային ժողովներ, որք կը  
բաղկանան հաքիմէն, միւֆթիէն, ոչ-խալամ ժողովրդոց կրօ-  
նական պետերէն, քաղաքեաթիպիէն և 3 անդամներէ :

Վիլայեթներու, սաննախներու և քաղաքներու այս վար-  
չային ժողովներու պաշտօնն է տեղական, ելմտական, ոս-  
տիկանական, երկրագործական, հանրային շինութեան և  
քալուի գործերու վերաբերեալ ամէն խնդիր կարգադրել,  
անօրինել : Այս ժողովները հոգու գը ումումիեի (հանրային ի-  
րաւանց) վերաբերեալ գործերուն չեն կրնար միջամտել :


Սյն գիւղերը, որոնք ուրոյն քաղաք մը կազմելու չափ  
կարեւորութիւն չունին, ո՛չ ալ, իրենց աշխարհագրական  
դիրքով, ուրիշ քաղաքի մը կրնան միանալ, կը կազմեն նա-  
հիլէ մը (գիւղախումբ) : Որուն վարչութիւնը յանձնուած է  
միւսիւրի մը : Միւտիրը ուղղակի Վալիէն կ'ընտրուի, բայց  
վարչային հրահանգները գայմագամէն կ'առնէ : Իր պաշտօնն  
է սուրքերը գանձել, դատական վճարները գործադրել և  
իրաւախոհութեամբ լուծելի դատերու մէջ ալ հաշտարար  
դատուորի դեր կատարել :

Վարիյեն (գիւղ) քաղաքի մը առնուազն 50 տուն ունե-  
ցող մէկ կամ աւելի թաղերէ կամ քանի մը պղտիկ աւան-  
ներէ կը բաղկանայ և իր գլուխն ունի մրֆսար մը, որ ժո-  
ղովուրդէն կ'ընտրուի, գայմագամէն կը վաւերացուի և  
իսքիյար մեկիսիին հետ կը գործէ : Գիւղի մը մըքտարն և

իսթիյար մէճլիսիի անդամները սա կերպով կ'ընտրուին. —  
Գիւղին մէջ տուն տեղ ունեցող, 18 տարեկանէն վեր եղող  
և տարին առնուազն 50 դր. տուրք տուող ամէն Օսմ. հը-  
պատակներ տարին անգամ մը կը գումարուին և կ'ընտրեն  
իրենց մըքտարն ու իսթիյար մէճլիսին : Մըքտարն ու իս-  
թիյար մէճլիսիին անդամները պէտք է տուն տեղ ունեցող  
ըլլան, 30 տարեկանէն վար չըլլան և տարին 100 դր. տուրք  
տան : Ասոնց պայմանաժամը մէկ տարի է, որ ի պա-  
հանջել հարկին կրնայ երկարիլ : Մըքտարը կառավարու-  
թեան հրամանները կը գործադրէ, սուրքերու գանձման  
կ'օգնէ, և թաղային գործերու կը միջամտէ :

Թաղը կը կազմուի քանի մը գիւղերէ կամ ամբողջ քա-  
ղաքէ մը և կամ քաղաքի մը մէկ ստորաբաժանումէն որ  
տրջանակ կը կոչուի :

Օսմանեան դասարաններու կազմակերպութիւնն  
և անոնց ասիւնաները



Պոլսոյ, Վիլայեթներու, Սաննախներու և Քաղաքներու  
մէջ գտնուած դատարաններուն և անոնց աստիճաններուն  
վրայ գաղափար մը ունենալու համար պէտք է գիտնալ թէ  
Ա. — Թուրքիոյ մէջ երկու տեսակ քաղաքային դա-  
տարան կայ, մին նեղայի կամ պատժական գործերու. —  
միւսը հուզուգի վերաբերեալ գործերու համար :

Բ. — ձեզայի և հուզուգի դատերն երեքական աստի-  
ճան ունին. —

ձեզայի համար, 1. Քապահաթ, 2. — ձիւնհա, 3. —  
ձիւնայիթ :

Հուզուգի համար, 1. — 150 դր. ի կամ համարժէք իրի  
մը վերաբերեալ դատ. 2. — մինչեւ 5000 դր. ի կամ համ-



արժէք իրի մը և կամ տարեկան 500 զրշ. եկամուտ բերող կալուածի վերաբերեալ դատ. 3. — 5000 զրշ. է վեր դատեր:

Գ. — Դատ մը կը տեսնուի սուլիէն (իրաւախոհութեամբ), պիսայքիէն (նախադատ ատենի առջեւ), իսքինաճիէն (վերաքննութեամբ) քեմիլիէն (վճարեկութեամբ):

Սուլիէի դատարանները (սեւլայիի սուլիլիէ), գիւղերու իսքիլար մեքիլիներն ու գիւղախումբերու նահիլի մեքիլիներն են: Այս ժողովներուն առջեւ կը տեսնուին այն դատերը զորս կարելի է իրաւախոհութեամբ լուծել երկու կողմին յօժարութիւնովը: Նահիլի մեքիլիին այս դատերէն զատ կրնայ պիսայքիէն և քարիէն, այսինքն առանց վերաքննութեան զրկելու վճուել մինչեւ 150 զրշ. և հուզուգի եւ կամ 6 հինգնոց տուգանք ունեցող նեզայի դատ մը: Սուլիի ժողովները վճուագիր (իլամ) չեն տար, այլ իրենց վճիռները տետրակի մը մէջ կ'արձանագրեն եւ մէկ օրինակը կուտան առ որ անկ է:

Նախադատ ատեաններ (պիսայք մահիլիէի) կան: Բազաներու, Սանճաքներու, Վիլայէթներու եւ Պոլսոյ մէջ: Գաւառակներու նախադատ ատեանները տեղական դատերը պիսայքիէն, իսկ գիւղախումբերէն եկած դատերը իսքինաճիէն կրնան վճուել: Այս դատարաններ ճիւղայի դատ չեն կրնար տեսնել, այլ միայն նախաքննութիւնը կը կատարեն եւ գաւառին Պատժական դատարանը կը զրկեն: Գաւառներու նախադատ ատեանները տեղական դատերը պիսայքիէն եւ գաւառակներէ եկած դատերն իսքինաճիէն կը վճուեն:

Վերաքննիչ ատեաններ կան Վիլայէթներու եւ Պոլսոյ մէջ: Վիլայէթներու Վերաքննիչ Ատեանները թէ՛ տեղական և թէ՛ գաւառներու մէջ: Վիլայէթի պիսայքիէն տեսնուած եւ յետոյ իրենց զրկուած դատերը կը տեսնեն: Գաւառակներու մէջ 10,000 զրշ. և կամ 1000 զրշ. է աւելի եկամուտ բերող կալուածի վերաբերեալ դատերը՝ կրնան ուղղակի Վիլայէթներու Վերաքննիչ Ատեաններուն առջեւ հանուիլ:

Պոլսոյ մէջ նախադատ եւ Վերաքննիչ ատեաններէն զատ կայ նաև վճարեկ Ատեան մը որ երեք ճիւղերու բաժնուած

է, նեզա սայիլիէի, հուզուգ սայիլիէի, իսքիսա սայիլիէի: Ասոնք թէ՛ տեղական եւ թէ՛ գաւառներուն դատերը քեմիլիէն կրնան տեսնել:

Վաճառաչակ կեդրոններու մէջ կան նաև Առևտրական դատարաններ: Իսկ հոն ուր այս տեսակ դատարաններ չկան, առևտրական դատերը կը տեսնուին հուզուգի դատարաններուն առջեւ:

Պոլսոյ մէջ երեք դատարաններ կան, մասնաւորապէս առևտրական դատերու համար: 1. — Իքիմիլի քիմարէք, 2. — Պիրիմիլի քիմարէք և 3. — Թիմարէքը պահիլիէ: Իքիմիլի քիմարէքը Օսմանեան հպատակներու միջեւ եղած դատերը կը տեսնէ: Պիրիմիլի քիմարէքը Օսմանեան հպատակի և օտար հպատակներու միջեւ եղած դատերը կը վճուէ, իսկ քիմարէքը պահիլիէն ծովային դատերու հետ միասին, սնանկութեան դատեր ալ կը տեսնէ:

Օսմանեան նահանգները

իրենց գաւառներով ու գաւառակներով

Ա. — 4. ՊՈԼԻՍ

Բնակիչ 1,250,000: Տարածութիւն 13,712 քառակուսի քիլօմէթր: Բերայի և Սկիւտարի միւթէսարըՖութիւններովը բաժնուած է Թաղապետական 10 շրջանակներու, որք են 1. — Սուլթան Պայազլիտ, 2. — Սուլթան Մէհմէտ, 3. — Ճէրազ փաշա, — 4. — Պէշիքթաշ, 5. — Եէնի գիւղ, 6. — Բերա, 7. — Պէօյիւքտէրէ, 8. — Անատուրու հիսար, 9. — Սկիւտար, 10. — Գատը գիւղ:

Կ. Պոլսոյ վիլայէթն ունի 2 գաւառ, 12 գաւառակ, 16 գիւղախումբ եւ 1239 գիւղ:

Հետեւեալ քաղաքներն ուղղակի Բաղաքապետութենէն կախում ունին:

1. Մեծ Կղզի (3 գիւղ, Գընալը, Պուրկազ, Հէյալիլի):



- 2. Կէյպղէ (1 գիւղախումբ (Տարըճա) և 42 գիւղ) :
- 3. Պէյքօղ (18 գիւղ) :
- 4. Գարթալ (1 գիւղախումբ (Սապանճա) և 24 գիւղ) :
- 5. Քիւչիւք չէքմէճէ (2 գիւղախումբ, 35 գիւղ) :
- 6. Շիլէ (84 գիւղ) :

Հետեւեալ երկու գաւառները ներքին գործոց նախարարութենէն կախում ունին —

1. — Իզմիսի սանճախ (գիւղխ. 2, գիւղ 81)

որուն գաւառակներն են .

- 1. Գարամուսոյ (1 գիւղախումբ [Եալօվա] և 70 գիւղ)
  - 2. Ատարազար (3 » և 226 գիւղ)
  - 3. Քանտրա (4 » 519 » )
  - 4. Կէյվէ (2 » 108 » )
2. — Չաղայնայի սանճախ (գիւղախումբ 1 [Տէրքօս] գիւղ 55)
- որուն գաւառակներն են
- 1. Սիլիվըրի (գիւղ 19)
  - 2. Պէօյիւք Չէքմէճէ (գիւղ 21)

**ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԻՒՆՅՈՅ ՎԻԼԱՅԷԹՆԵՐԸ**

**Բ. — ՊՐՈՒՍԱ (ԽԻԻՏԱՎԷՆՏԻԿԵԱՐ)**

Բնակիչ 1, 650, 000. Տարածութիւն 68, 000 քառակուսի քիլօմէթր : Ունի 5 սանճաղ, 24 քաղա, 50 գիւղախումբ, 3540 գիւղ :

1. — Պրուսայի սանճախ

որմէ կախում ունին հետեւեալ քաղաքները

- 1. Մուտանիա (նաւահանգիստ, Պրուսայէ 28 քլմ. հեռի)
- 2. Միխալըճ (2 գիւղախումբ և 18 գիւղ)
- 3. Կէմէլէյիկ (1 » (Եէնէգիւղ) 31 գիւղ)
- 4. Քիւրմասթի (1 » 139 գիւղ)
- 5. Էդրանոս (2 » 193 » )
- 6. Բազարքէօյ (18 գիւղ)

**Օ Ր Հ Ա Շ Ի Ի**

**Տեսրց Յակոբ և Յովհաննէս Գրիգորեան  
Եղբարց**

1	1	Հոկտ. 1901		
2	Տ. Յակոբ Գրիգորեան		50000	
	Իր բաժինը, ըստ պայմանագրի			
2	Տ. Յովհաննէս Գրիգորեան		50000	
	Իր բաժինը, ըստ պայմանագրի			
1	Գրամագլխին			100000
	Ընկերութեան զրամագլուխը			
2	Նոյն			
11	Փոխանակագիր		13580 50	
2	Տ. Յակոբ Գրիգորեանի			13580 50
	Իր բաժնեվճարը, ցուցակ 1			
3	Նոյն			
14	Ընդհանուր Ապրանք		4297	
2	Տ. Յակոբ Գրիգորեանի			4297
	Իր բաժնեվճարը, ապրանք.Արժէք 1 Հոկ.			
4	Նոյն			
9	Սնտուկ		7122 50	
2	Տ. Յակոբ Գրիգորեանի			7122 50
	Իր վճարումը			





## ԹՈՒՐԲԻՈՅ ԳՈՐԳԵՐԸ

### 4. ԻՉՄԻՏԻ ՄԷՉ

(Ճար.)

Գորգի ճարտարարուեստը վերջին տարիներս գլխաւորէս զարգացած ըլլալով, կառավարութիւնը շինել տուաւ ուրիշ գործարաններ, ուր աւելի քան 350 գործաւորուհիներ ու աղաքներ օրապահիկ մը կը հանեն: Գործարանն ունի երկու վարպետներ՝ զծագրիչ մը և ներկարար մը: Գործասեղանը շատ պարզ է. կը բաղկանայ երկու ցից տախտակներէ, 2 մէյր բարձրութեամբ, և երկու գլանաձեւ փայտերէ, հորիզոնական ձևով կը զուստ: Սանտր մը և մկրատ մը, — ահա՛ գործարաններուն ամբողջ գործիքը: Հորիզոնաձեւ դրոսով փայտերուն լայնութիւնն է 20—25 սանդիմէզը, իսկ երկայնութիւնը կը փոխուի գորգին ծաւալին համեմատ: Մինչեւ 25 մէյր երկայն, 10 մէյր լայն և 9—10 սանդիմէզը թանձրութեամբ գորգեր կը շինուին ու կը ղրկուին Պոլիս և Եւրոպա, ուր շատ գնահատուած են:

### 5. ԳՈՆԻԱՅԻ ՄԷՉ

Գորգի ճարտարարուեստն առաջ խիստ զարգացուն վիճակ մը ունէր Գանիայի մէջ, ուրկէ քիչ քիչ տարածուեցաւ ուրիշ կեդրոններ, ինչպէս Ուշագ, Կէօրաէս, Տէմիրճիք, Սպարդա, ևն: Քանի մը տարի առաջ, Պոլսոյ ճիւղինիատի վաճառատունը փորձեց գորգաշինութեան ոյժ տալ եւ պէտք եղած դրամագլուխը դրաւ: Իրաւ է թէ իր գործակալին ջանքերը բաւական յաջողութեամբ պահուեցան, բայց այսօր գործերը փափաքուած վիճակին հասած չեն, որովհետեւ վաճառատունը պարտաւորուած է մըցիլ Ուշագի, Սպարդայի ևն. գորգերուն համբաւին դէմ: Իր պատրաստած գորգերուն տեսակը լաւ է, բայց զինները քիչ մը սուղ են, բանողչէքին սղութեան պատճառաւ: Յուսալի է որ բուրդին և գոյներուն ընտրութեան և գորգերուն լաւ



ԳՈՐԳԱՅԻՆ ԹԻԹԻՆ



պատրաստութեան համար տարուած ուշադիր խնամքներն ի վերջոյ պիտի յաջողին նոր հրապարակներ գտնել Գոնիայի գորգերուն համար: Այս նահանգին գորգի տարեկան արտադրութիւնը 20,000 մէդր է, վեր ի վերոյ 22,000 ոսկի արծէքով: Իժմատարար հիմա տեղական բուրգէն շատ չընչին մաս մը միայն կը գործածուի գորգերու շինութեան, բայց եթէ այս ճարտարարուեստը զարգանայ, բուրգի տեղացի վաճառականք ապահով հրապարակ մը պիտի գտնեն անշուշտ իրենց ապրանքը քշելու:

### 6. ԷՆԿԻԻՐԻԻ ՄԷՉ

Էնկիւրիի գլխաւոր ճարտարարուեստն է գորգաշինութիւնը: Գորգերը երկու կարգի կը բաժնուին, թաւաշինակ եւ ողորկ: Առաջիններուն մէջ են Օրքա խալիսի ըսուածները, որք մեծ գորգեր են տախտակամածներու համար, եւն խալիսի, երկար ու նեղ, քանարեներու ծածկոյթի համար և սեհասե, պղտիկ քառակուսի գորգեր: Երկրորդ կարգին մէջ են ճեհիմները, 4—5 մէթր երկայն և 1.80—2 մէթր լայն, որք կը գործածուին իբր դրան վարագոյր կամ կը դրուին պատի վրայ, և քիլիմները, դիմացկուն գորգեր, որք ամէն մեծութեամբ կը պատրաստուին: Էնկիւրի գաւառակին Գիւրտերուն շինած գորգերն յարգի են իրենց տոկունութեան եւ գոյներուն հաստատութեան պատճառաւ: Գորգերու շինութեան գլխաւոր կեդրոնն է Կեսարիա: Յետոյ կուգան Գըրչէհի: Եօզկատ եւ Էնկիւրի գաւառակները: Կեսարիոյ մէջ կը շինուին նաև մետաքսէ և այծի մազէ գորգեր, որոնց թեզանն ընդհանրապէս բամբակէ է: 1900 տարուոյ մէջ, Էնկիւրիի նահանգէն արտածուած գորգերու արծէքն եղած է 101,200 Օսմանեան լիրա, և բաժնուած է հետեւեալ կերպով: —

Անգլիա	Օսմ. լիրա	15,200
Ամերիկա	»	35,200
Գերմանիա	»	11,000
Ֆրանսա	»	6,600
Աւստրիա	»	8,800
Կ. Պոլիս	»	22,000
Յունաստան	»	2,200
		101,200

## Մետաքսի վաճառականութիւնը

Մետաքսի արտադրութիւնը եւ վաճառականութիւնը զանազան երկիրներու մէջ. (Շար). — Թուրքիոյ մետաքսը. — Արհեստական մետաքս. — Արհեստականը բնականէն որոշելու եղանակը. — Վայրի մետաքս. — Մետաքսը Լիօնի մէջ:

Զուիցերիա. — Արտադրութիւն 40,000 քիլո: Արտածման հրապարակներ, Զիւրիխ և Պալ:

	Ներածում	Արտածում
Ողջակ	225,000	400,000
Բժոժական մետաքս	600,000	180,000
Բանուած	» 1,900,000	650,000

Զուիցերիա խոզակը կ'ընդունի Իտալիայէ, բժոժական մետաքսը՝ Ասիայէ և բանուած մետաքսը՝ Ֆրանսայէ ու Իտալիայէ: Կ'արտածէ գլխաւորապէս ի Գերմանիա:

Սպանիա. — Արտադրութիւն 80,000 քիլո, որուն մեծագոյն մասը Ֆրանսա կը գնէ: Սպանիա՝ իր պէտքին համար՝ կը ներածէ 130,000 քիլո բժոժական մետաքս և 20 հազար քիլո բանուած մետաքս:

Բուրգուկալ. — Արտադրութիւն՝ աննշան: Ներածում՝ 10,000 քիլո:

Գերմանիա. — Արտադրութիւն չունի: Ներածում Իտալիայէ, Զուիցերիայէ ու Ֆրանսայէ 2,800,000 քիլո բժոժական և բանուած մետաքս: Արտածում 150,000 քիլո:

Անգլիա. — Արտադրութիւն չունի: Ներածում 1 միլիոն քիլո, և արտածում՝ 80,000 քիլո:

Ամերիկա. — Արտադրութիւն չունի: Կը ներածէ 4 միլիոն քիլո, գլխաւորապէս Եօքօհամայէ ու Շանկայէ:

Եգիպտոս. — Արտադրութիւն չունի: Կը ներածէ 180 հազար քիլո:

Մարօք. — Արտադրութիւն և ներածում 5000 ական քիլո, ներքին պէտքերու համար:



Ամփոփում

Եւրոպա	քիւօ	4, 277, 000	
Արեւելք	»	1, 760, 000	
Ծ. Արեւելք	»	11, 535, 000	
Գումար		17, 572, 000	քիւօ

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԵՏԱՔՍԸ

Ասիական Թուրքիա. (Պրուսա, Պէրսի, Իզմիր, Տիարպէքի, Եւն.) — Տարեկան արտադրութիւն 900—950 հազար քիւօ և արտածում՝ 780 հազար քիւօ:

Եւրոպական Թուրքիա (Սելանիկ, Էաիքնէ). — Արտադրութիւն 200 հազար քիւօ և արտածում 130 հազար: Նաև կ'արտադրէ 280 հազար քիւօ խոզակ, որուն արտածումը քիչ է:

Պրուսա և Իզմիր, Հանրային Պարսոց Վարչութեան 1900ի վիճակացոյցին համեմատ, արտադրած են 652, 797 ունկիի հունա, «Պաղտատ» ըսուած տեսակէն: Ասոնցմէ 195, 382 ունկին տեղւոյն վրայ գործածուած են և մնացեալ 457, 597ին 38, 371ը արտածուած են Օսմանեան ուրիշ երկիրներ, ինչպէս Էաիքնէ, Չադալճա, Հալէպ, Ատանա, Էնկիլի, Գոնիա, Տրապիզոն, Սվազ, Խարբերդ ևն. Եւ 419, 226ը՝ Պարսկաստան, Ռուսիա, Ֆրանսա, Յունաստան, Պուլկարիա, Սերպիա ևն: Շերամաբուժական ճարտարաբուժական շատ զարգացած է Պրուսայի մէջ, որ մետաքսի կարեւոր կեդրոն մ'է: Գծրախտաբար հոն արտադրուած խոզակները բաւական չեն ամբողջ տարին գործ հայթայթելու համար այն տեղի մանարաններուն: Այս ճարտարարուեստին երեսէն ապրողները 6—7 ամիսի չափ անգործ կը մընան: Պարսկաստան և Կովկաս «Պաղտատ» ի խոզակ արտադրող կարեւոր երկիրներ եղած են այսօր և այս արտադրութիւն տարուէ տարի աւելնալու է: Բայց որովհետև, մանարաններ չգտնուելուն համար, տեղւոյն վրայ օգուտ չեն կրնար քաղել այս նախանիւթէն, այս պատճառով գրէթէ մեծ մասամբ կ'արտածեն Իտալիա, որ կ'ընդունի առանց մաքսի: Ուրեմն, իտալական ճարտարարուեստը կրնայ

այս խոզակներով պատրաստել Պրուսայի մետաքսին յար և նմանը, ու անոր հետ մրցիլ սպառող հրապարակներու վրայ եթէ դիւրութիւն մը չընծայուի Պարսկաստանի ու Կովկասի խոզակները Պրուսա ներածելու: Թերեւս առարկուի թէ օտար խոզակներու ազատ ներածումը բնիկ խոզակին գինը պիտի կտորէ: Ինչո՞ւ: Մանարանները տարուէ տարի կ'աւելնան ու խոզակը կը պակսի միշտ: Ընդունելով թէ Պարսկաստանի ու Կովկասի խոզակները պիտի ողողեն Պրուսայի հրապարակը, միթէ գնորդ կը պակսի: Օտար գնորդները միշտ պատրաստ են յաւելեալ խոզակը գնելու: Եւ յետոյ, օրական 7—800 Օսմ. ոսկի կը հաշուուի աւուրչէքը զոր կ'առնեն մետաքսի ճարտարարուեստին ծառայող գործաւորները: Արդ, խոզակի տեղական արտադրութեան անբաւականութեան պատճառաւ, մանարանները տարւոյն մէջ 4—5 ամիս միայն կը բանին: Ի՞նչ կորուստ ժողովրդեան համար և ի՞նչ հարստութիւն եթէ նախնական նիւթը բաւէր ամբողջ տարին մանարանները բանեցնելու:

Արհեստական մետաքս. — Վերջապէս յաջողեցան մետաքսին կեղծը շինել զանազան նիւթերով, ինչպէս եղեւինի, բարախի (բոգ աղանք), կաղամախի (բալվախ ողանք) եւն. խորշանիւթերով: Արհեստական մետաքս պատրաստելու համար կը գործածեն եթեր և բորակական թթուի (acide nitrique) ու գգուած բամբակի ծծմբական թթուի խառնուրդ մը: Այսպէս կ'ստացուի հրաբամբակը որ մամոյ տակ կը դրուի, կը լուացուի և յետոյ բաց օդին կը փռուի: Հրաբամբակն ալբօրի և եթերի խառնուրդի մը մէջ լուծուելով թանձր զանգուած մը կը կազմէ որ երեք զտոցներէ անցնելէ ետք պատրաստ է թել քաշուելու: Այս նպատակին հասնելու համար զանգուածը կը դնեն արոյրէ գլանի մը մէջ ուր ճնշեալ օդի կ'ենթարկուի և գլանէն դուրս կ'ելնէ շատ բարակ թելերով, հանդարտ ջուրի մը մէջէ, որուն հետ շփուելով հաստատուն մարմին մը կ'ըլլայ: Այսպէս կազմուած մետաքսի թելը ճախարակի մը վրայ կ'անցուի և յետոյ կը կարծուի: Կարծերը (չիլե) քանի մը ժամ կը ձգուին սիւլֆուր սթ քալիումի մէջ: Արհեստական մետաքսն ապա



կրնայ ներկուիլ կամ հիւսուիլ: Հետեւեալ մէթոտով կարելի է արհեստական մետաքսը որոշել բնականէն: — Կերպասի կամ թելի նմոյշ մը կը խօթէք 2 մաս ասիս սիւլֆուրիքի եւ 1 մաս ասիս ցիբրիքի խառնուրդի մը մէջ, և ժամու մը չափ այսպէս կը ձգէք: Բնական մետաքսը, այս գործողութեան միջոցին կը լուծուի, մինչ արհեստականը՝ ո՛չ: Այն ատեն խառնուրդին մէջէն կը հանէք այդ թելերը, ջուրին մէջ կը լուաք որպէսզի թթուն (acide) վրայէն երթայ, և ապա զգուշութեամբ կը չորցնէք: Այս թելերուն մէկ մասը՝ քանի մը կաթիլ ասեդոցի մէջ լուծուելով՝ զանգուած մը կը կազմէ: Միւս մասը՝ բոցի մը բռնուելուն պէս՝ կ'այրի ճարճատու մով:

\* \* Արհեստական մետաքս շինելու յատուկ մէկ գործարան միայն կայ Ֆրանսայի մէջ, ի Պըզանսոն, 1900ին հաստատուած: Օրական 150 քիւօ կ'արտադրէ, քիւօն 20—30 ֆրանքի: Ուրիշ գործարան մ'ալ կայ Շարէտէնպատի մէջ (Չուիցերիա) և երրորդ մը՝ յՈւօլսդըն (Անգլիա): Արհեստական մետաքսը կը գործածուի մանաւանդ սուզակեղէններու համար: Գլխաւոր հրապարակն է Գերմանիա:

Վայրի մետաքսները, որք զլիւարապէս Հնդկաստանէ կուգան, կ'արտադրուին տեսակ մը թրթուրներէ, որք ընդհանրապէս կը կոչուին Թիւսահ, ուրկէ եկած է այս մետաքսին անունը: Կը գործածուի մանաւանդ կահաւորումի ծառայող կերպասներու, թաւապատաններու (peluche) համար. ևն:

Լիօնի մէջ մետաքսի վաճառակառութիւնն ի գործ կը դրուի աջակցութեամբ զանազան հաստատութիւններու, ինչպէս « Ընդհանուր վաճառատուն » ներու, պանքաներու և մետաքսը կըռելու եւ չորցնելու յատուկ հանրային հաստատութիւններու: « Ընդհանուր վաճառատուն » ները օրէնքով արտօնուած հաստատութիւններ են, որք ապրանքներ կ'ընդունին իբր աւանդ և ընկալագրեր կուտան յանձնողաց:



Գ Ի Ն Բ . ZUSNORF

# 12 ՂրուՆ

Գաւառաց համար՝ իբր բոսսի ծախս՝ 3 դրուշ անդի

ԿԱՆՆԻԿԻ ՀԱՄԱՐ 15 0/0 ԶԵՂԶ

Հասցե. — ՍԻՄՐՈՆ ԶԷՕՄԼԷՔՃԵԱՆ  
Ի Խմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաբերքի  
Պապը Աշի ճաստեսի թիւ 23—25 Կ. Պոլիս  
Կամ

Ի ԶՄԻՏ ՕՐԻԷՂ, ԹԻԻ 21

Կ. Պոլիս, Էսկի Զապրիէ ճաստեսի

# 12 ՂրուՆ

## Հանրագիտակի

Ա. Թիւը հրատարակուեցաւ պատկերազարդ նշան պարունակութեամբ:

Կ. Պէրպլերան տպարանէն ճոխ ճեռքը տալիք գիրք մը, հանդէս մը կը փնտռեն, արդեօք չափազանցութի՞ւն կ'ըլլայ եթէ բռնէ որ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, մէկ հատիկը կրնայ հանդիսանալ ընտանիքներու մէջ թափանցող և զպրոցականներու յատուկ է:

Տարեկան բաժնեգիրն է Պոլսոյ համար 40, վեցամսեայ՝ 20, եռամսեայ՝ 10 դճկ: Հատը 40 փարայ:

Գաւառները՝ տարեկան 45, վեցամսեայ՝ 25, եռամսեայ՝ 12 1/2 դճկ: Հատը 50 փարայ:

Հասցե՝ — ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ,

Կ. Պոլիս, Էսկի Զապրիէ ճատտէսի, Թիւ 61:

## ՄԷՃԷԼԼԷ

Կամ ՕՍՄ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԳԻՐՔ, հինգ հատոր, անգեղճ 20 զրշ. — Կիտակաշի գեղակազմ՝ 25 զրշ: — Կեդրոնատեղի, Զաքմաքճըլար, աղբիւրին կարգը, կազմարար Արշակ Մանուկեանի կազմատունը:

معارف نظارت جليله سنك ۳۰۳ نومروى و فى ۱۶ تشرين اول  
سنه ۱۳۱۶ تاريخاً و رخصتاً مه سيله طبع اولمشدر



« Ազգային գրադարան »



NL0083828



